ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Միության հետազոտությունների ու զարգացման «Հորիզոն Եվրոպա» (ՀԵ) ծրագրերին հայ գիտնականների մասնակցությունը խթանելու նպատակով իրականացվել են մի շարք տեղեկատվական միջոցառումներ:

Շահառուների բազան համալրվել է նոր անդամներով: Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տարածվել է մոտ 400 տեղեկատվություն եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված բաց մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանալիք միջոցառումների մասին, տրամադրվել է մոտ 100 անհատական խորհրդատվություն՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ:

«Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայաստանյան սոցիալական ցանցերի էջերում պարբերաբար տարածվել է մանրամասն տեղեկատվություն ծրագրի, կոնտակտային անձանց ցանցի, բաց մրցույթների, գործող նախագծերի, միջազգային միջոցառումների, տեղեկատվական օրերի, բրոքերային միջոցառումների ու գործընկերների փնտրման առաջարկների վերաբերյալ:

Տրամադրվող ծառայություններն ուղղված են եղել ոչ միայն ակադեմիական ինստիտուտներին, այլև բոլոր գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, գիտատար գործունեութ- յամբ զբաղվող ՓՄՁ-ին ու հասարակական կազմակերպություններին:

ԵՄ փորձագետների հետ համատեղ կազմակերպվել են մեկշաբաթյա «Հորիզոն Եվրոպա» հայտադիմումների նախապատրաստման դասընթացներ, որոնք ներառել են հնարավոր դիմորդների հետ անհատական խորհրդատվություններ:

ԵՄ «NATIOONS» նախագծի հետ համատեղ կազմակերպվել է ազգային ներգրավվա- ծության միջոցառում, որի նպատակն է բարձրացնել ԵՄ ՀԵ «Որակյալ բնահող» առաքե- լության իրազեկությունն ազգային շահագրգիռ կողմերի շրջանում՝ ապահովելով որակյալ նյութերի ու տեղեկատվության հասանելիություն, խթանելով մասնակցությունը բնահողի որակի բարելավման կենդանի լաբորատորիաների ու փարոսների ստեղծման մրցույթներին:

Եվրոպական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական միջոցառումներ են անցկացվել ոչ միայն նախագահությունում, այլև ԳԱԱ կազմակերպություններում, բուհերում: Միջոցառումներին ներկայացվել են Հորիզոն Եվրոպա և ԵՄ դրամաշնորհային ծրագրերի մրցույթները, դիմելու ընթացակարգերը, համատեղ գիտահետազոտական նախագծերին մասնակցելու ու ֆինանսավորում ստանալու հնարավորությունները:

2023 թ. սեպտեմբերին կազմակերպվել է «Հորիզոն Եվրոպա» մասնակցության ընդլայնում ու եվրոպական հետազոտական տարածքի հզորացում (Widening) ենթածրագրին նվիրված տեղեկատվական միջոցառում, որի ընթացքում ներկայացվել են ենթածրագրի մրցույթները, նախագծի շրջանակում հասանելի նախագծերի առաջարկների մասնագիտական վերստուգման ու բրոքերային միջոցառումների համար նախատեսված ճանապարհորդական դրամաշնորհի սխեմաները՝ խթանելու ծրագրերում հայտերի ներկայացման գործընթացը: Այդ հնարավորությունների շրջանակում ԳԱԱ ինստիտուտների 4 գիտնական ստացել է ճանապարհորդական դրամաշնորհներ և մասնակցել եվրոպական տարբեր երկրներում անցկացված ՀԵ բրոքերային միջոցառումներին: ԳԱԱ ինստիտուտների ներկայացրած ՀԵ 3 նախագծերի առաջարկներ անցել են ԵՄ փորձագետների մասնագիտական վերստուգում:

Դեկտեմբերին Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ ԳԱԱ-ում անցկացվել է ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի տեղեկատվական միջոցառում, որին մասնակցել է 80 մարդ: Միջոցառման նպատակն էր խթանել Հայաստանի կազմակերպությունների մասնակցությունը ԵՄ գիտանորարարական նախագծերին: Միջոցառման ընթացքում Եվրահանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրել են «Հորիզոն Եվրոպա» ծրագիրն ու մրցույթները, Հայաստանի գիտանորարարական կազմակերպությունների ու անհատ գիտնականների մասնակցության հնարավորությունները տարբեր ենթածրագրերում՝

«Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողությունները», «Մասնակցության ընդլայնում և եվրոպական հետազոտական տարածքի հզորացում», «Նորարարությունների Եվրոպական խորհուրդ», «COST գործողություններ» և այլն:

Աշխատակիցները ԵՄ դրամաշնորհային ծրագրերը ներկայացնելու նպատակով մասնակցել են տարբեր միջոցառումների՝ ԵՄ NanoQIQO նախագծի շրջանակում կազմակերպված «Օպտիկայի և ֆոտոնիկայի դպրոցին», «Հայաստանում գործող ընկերություններին հասանելի ծրագրեր և գործիքներ» սեմինարին, Գիտության և գործարարության օրերի շրջանակում «Գիտություն, տնտեսություն՝ տեխնոլոգիաների առևտրայնացում», «Գիտության և գործարարության EXPO» միջոցառումներին, մի շարք թրեյնինգների: